

Մ. Ս. Իսախանյան

ՄԻ ԱՆՀԱՅՏ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի Պետական Պատմական թանգարանի սեպագիր (նեգատիվների) ֆոնդը նախելիս մեզ հանդիպեցին ՔՔՔ 7278—7285 սեպակիները, որոնք պատկերում են ուրարտական սեպագիր արձանագրության էստամպի նկարահանումները:

Մեր ուսումնասիրությունը պարզեց հետևյալը. այդ սեպակիների մի մասը կրկնությունն է մյուս մասի. իսկ որպես առանձին արձանագրություն մնում են՝ ՔՔՔ 7281—7284 սեպակիները, որոնցից վերջինը ունի առղերի առանձին համարակալում (1—12):

ՔՔՔ 7281—7283 նեգատիվները, ինչպես ցույց տվեցին մեր պրպատմները, կազմում են մի մեծ կոթողի, իրար շարունակություն կազմող, առանձին մասերը. այդ պարզ երևում է արձանագրության փորագրական արվեստից, բովանդակությունից և մանավանդ սեպակու վրա նշված տողերի համարակալումից, որը կատարել է, հավանաբար, էստամպ հանողը կամ նրա նկարահանողը:

Դժբախտաբար մեզ դեռ չի հաջողվել որոշակի իմանալ, թե որտեղ, երբ և ով է հայանաբերել այս արձանագրությունը, և ով է հանել նրա պատճենը:

Մեր ստուգումը պարզեց միայն հետևյալը. այս արձանագրությունը ոչ մի տեղ չի հրատարակված, ուստի և դուրս է մնացել անգամ վերջին տասնամյակում լույս տեսած ամենակատարյալ ժողովածուներից¹:

Փննության առարկա արձանագրության ընթերցումը հիմք է տալիս մեզ նշելու, որ այն լրացնում է ուրարտական թագավորներ Իշպուինիի և Նրա Թրդի Մենուալի (9-րդ դարի վերջին քառորդը մ. թ. ա.) միացյալ տեքստերի շարքը:

Ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ սեպակիները, արձանագրությունը վատ է պահպանված. հատկապես փաստված են՝ տեքստի աջ մասը, սկիզբը (1—5 տողեր)², միջին մասը (19—28 տողեր) և պակասում է վերջաբանը³:

¹ Երևանի Պետական Պատմական թանգարանի դիրեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Կ. Ա. Փաղարյանի հայտարարության համաձայն, այդ էստամպները, որոնք խիստ քայքայված վիճակում են եղել, նկարահանվել են Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցու բակում. բայց թե ո՞ւմ նյութերից են նրանք և այժմ ո՞ւր են այդ էստամպները, Կ. Ա. Փաղարյանը չի հիշում:

² Լ. Մելիկիշվիլի, Урартские клинообразные надписи, 1960, այսուհետև՝ УКН (տե՛ս նաև Вестник Древней Истории ВДИ, 1953, 1—4):

F. Kōnig, Handbuch der chaldäischen Inschriften. 1955, I, այսուհետև՝ F. Kōnig, I. Դժբախտաբար մեր ձեռքի տակ չունենք նույն աշխատության II մասը:

³ Մեր ենթադրությամբ սկզբից էլ պակասում է ուղիղ իննը տող:

⁴ Վերոհիշյալ տողերը թերևս պետք է վերագրել էստամպներին, որոնք, ինչպես արդեն ասացինք, նկարահանվել են խիստ քայքայված վիճակում:

Նախքան այս արձանագրության վերլուծումը, մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել առաջին հայացքից սրա հետ կապ չունեցող № 7284 սևապակու վրա, որը մեր համոզմունքով ոչ միայն բանալի է մեզ հետաքրքրող արձանագրության մեկնաբանման համար, այլև կարևոր ճշտումներ է մտցնում վաղուց հրատարակված մի այլ արձանագրության վերծանման ու ժամանակի հարցում:

№ 7284 սևապակու մեր ընթերցումից պալզվեց, որ այն պարունակում է անեծքի ֆորմական, որը, սակայն, սկզբից մի սողի հավելումով, բառացի կրկնությունն է ClCh, № 29 արձանագրության հակառակ կողմում փորագրված տեքստի¹:

Նշված երկու արձանագրությունների ուշադիր ու մանրամասն համեմատությունը շուտով որոշակի ապացուցեց, որ մեւք գործ ունենք մի նոր արձանագրության հետ, որը աներկբա կազմում է վաղուց հայտնի այդ արձանագրության կրկնօրինակը (հմմ. №№ 1 և 2 նկարները):

Այս երկու տեքստերը թեև տող առ տող բացարձակապես նույնանում են, սակայն առանձին նշանների միջև եղած հեռավորությամբ տարբերվում են իրարից, իսկ ClCh № 29 արձանագրության (աղյուսակ XVI, հակառակ կողմը), ցածից հաշված 6-րդ (տողավերջում՝ նախավերջին նշանը) և 8-րդ (տողավերջից՝ IV նշանը) տողերում, հակառակ երկու տեքստերում հանդիպող li նշանի սովորական 𐤋 գրելաձևին, փորագրված է 𐤋𐤌 (li), ձևով:

Ահա այս շատ պատահական հանգամանքը բոլորովին անվիճելի է դարձնում մեր դիտողությունը. մյուս կողմից՝ իրապես հաստատվում է տեքստի այն հաղորդումը. թե սահմանվել է երկու արձանագրություն — կոթող:

Մենք՝ փոխադարձ վերականգնումներով կողք-կողքի նշում ենք այդ երկու տեքստերը (նկար № 1, № 2):

I. № 7284 ճեգ. (Եր. Պետ. Պատ. քանգ.)
(1) [6-8 նշան. pu²-li] u-si za-du-bi]³
|¹ Me-nu-u⁴-a-še | Is-pu-ú-i]-ni-
hi-ni-|šē]⁵

II. ClCh, 29 աղ. XVI, König, 74 հաղ.կ.
(1)¹

¹ C. F. Lehmann-Haupt, Corpus Inscriptionum Chaldaicarum, մաս I, № 29 արձանագրություն, աղյուսակ XVI (լուսանկարը բնագրից). VKH. № 99, F. König, I, № 74. աղյուսակ 49 (գծագիրը):


2. Թերևս նախորդել է i-ni=այս բառը և NA. =քսո ուղիղ, թեև հաջորդ՝ 6-րդ տողում նույն բառը գրված է առանց որոշիչի. ուր տեղի էլ թույլ չի տալիս նման վերականգնման համար:

3. Վերականգնում ենք ղուղահեռ տեքստի (ClCh. 29) 4-րդ, 5-րդ և 6-րդ տողերում հանդիպող terubl բայաձևի հիման վրա:


4. Դուրս է թե պարտադիր չէ այս վերականգնումը:

5. Վերականգնվում է al(e)=տսում և բայաձևի հիման վրա:

1. № 7284 սևապակու սղնությամբ այստեղ պետք է վերականգնել [6-8 նշ. pu-lu-si za du-bi] բառերը: Այդպիսով՝ որոշակի նշվում է 12 տող, մինչդեռ նախորդ հրատարակություններում այս արձանագրությունը հայտնի է 11 տողով. միայն F. König-ն է նկատել 12-րդ տողը, բայց նրա ընթերցումն էլ մնացել է 11 տողի սահմաններում, քանի որ որևէ հիմք չի ունեցել այն վերականգնելու, ինչպես պետք է ենթադրել համապատասխան գծագրից (F. König, I, № 74, աղ. 49):



24. 1.



24. 2.

- [a]-li⁶ ^{DH}[al-di-n]i-[e ba-du]-si-
-e DUB-[te]
[te-r]u-[ú]-[bi a-li ^{URU}Ar-]šu-ni-
-ú-i-[ni]
(5) [DUB-t]e te-[ru-ú-bi a]-li⁷ i-na-
[a]
[pu-] lu-si i-[na-a DUB-t]e te-ru-
ú-[bi]⁸
a]-lu-uš-ni tu-|li-e a-lu]-še pi-
tú-li⁷-[e]
[a]-lu-še še-[er⁹.du-li-^re] a-lu-|še]
[ú-]li-e i-n[li-li du-li-e] ^{DH}il-di-
[še]
(10) [D]IM-še ^{UTU}-[še qi-ú-ra]
a-še DINGIR^{MES}-[še]
[tú-r]u-ti-ni-^re'-[ni m]a-a₁-ni e-'
[a]
(12) [zi]-li-bi q[li-ú-ra-a-n]i¹⁰ e-di-ni

6. «Ասում է» բայի այս ձևը և արձանագրու-
թյան բովանդակությունը թելադրում են
մեզ տվյալ ղեպքում, հաջորդ 4-րդ և 5-րդ
տողերում հանդիպող al-ի ներք ըմբռնել
նույն «ասում է» իմաստով և ոչ թե որ-
պես հարաբերական ղերանուն, ինչպես
վերծանել են ղուգահեռ տեքստի նախորդ
հրատարակողները:
7. Ի տարբերություն ղուգահեռ տեքստի,
փորագրված է  ձևով:
8. Թերևս պետք է վերականգնել -be(-) ձևը,
ինչպես հանդիպում է համապատասխան
աեղում՝ ClCh, № 29 արձանագրության
մեջ:
9. Թվում է, թե նման ղեպքերում ավելի
ճիշտ է  նշանի -er- տառադար-
ձումը:
10. Ինչպես արդեն ասել ենք, ֆուսաված բոլոր
նշանները վերականգնել ենք ղուգահեռ
տեքստի օգնությամբ, նկատի ունենալով,
անշուշտ, նաև տեղի հնարավորությունն
ու պահպանված սեպագիտությունը:

Այս կրկնակ արձանագրությունների մեր թարգմանությունը կլինի հե-
տևյալը.


1. (այս) կոթողը կատարեցի¹:

2. Մենուան Իշպու-իսյան

3. ասում է՝ (աստված) Խալդուն հոյակապ

¹ Հստ երևույթին, այստեղ պետք է հասկանալ «ավարտեցի» իմաստով, ի դեպ՝
առաջին փաստն է, որ zadu- բայը կիրառված է pu-lu-si = կոթող գոյականի հետ:

- [Me-nu-ú²-a-še ¹Is-pu-]ú-i-ni-bi-ni-
[še]³
[a-li⁴ D] Hal-di-ni-e ba-du-si-e DUB-
-t[e]
[te-r]u-ú-bi a-li ^{URU}Ar-šu-ni-ú-i-n[li]
(5) [DU]B-te te-ru-ú-bi a-li⁵ i-na-^rla]
[pu-]lu-si i-na-a DUB-te te-ru-ú-
b[e]⁶
[a-l]u-uš-ni tu-li-e a-lu-še pi-tu-
li⁵e¹
[a]-lu-še še-er⁷.du-li-e a-lu-š[e]
[ú-]li-e i-ni-li du-li-e ^{DH}il-di-š[e]
(10) [D]IM-še ^{UTU}-[še qi-u-ra-a-še
DINGIR^{MES}-[še]
[tú]⁸.ru-ti-ni e-ni ma-a-ni e-^ra₁
(12) [zi]-li-bi qi-ú-ra-a-ni e-di-ni

2. Գ. Մելիքիշվիլին չի վերականգնում
(YKH, № 29, 1 տող). նախելով տեղին, ճիշտ
ենք համարում F. Köniգ-ը ընթերցումը:
3. Տե՛ս ղուգահեռ տեքստի (72b) սեպակի
հինգերորդ ծանոթագրությունը:
4. Նախորդ հրատարակություններում [a-
li-e]. մեր № 7281 սեպակին ցույց է տա-
լիս, որ ճիշտ է F. Köniգ-ի [a-li] ընթեր-
ցումը:
5. Ի տարբերություն ղուգահեռ տեքստի
(տե՛ս ծնթ. 6-րդ), փորագրված է
 ձևով:
6. Ճիշտ է F. Köniգ-ը:
7. Սովորաբար ընթերցվում է is. տե՛ս ղու-
գահեռ տեքստի 9-րդ ծանոթագրությունը:
8. Հստ Ա. Գյուրգենի, որը հիշյալ բառը հա-
մարում է turinini բառի հոգնակի ձևը,
եթե, ինչպես նշում է ինքը, ճիշտ է այդ
վերականգնումը (KHA, 22-23, 1936, էջ
196): Այն բացակայում է F. Köniգ-ի գծա-
գրումը:
9. Գ. Մելիքիշվիլին վերականգնում է նաև
-i-, որ թյուրիմացության արդյունք է.
այն, մեր կարծիքով, իրավամբ բացակա-
յում է F. Köniգ-ի գծագրումը:

արձանագրություն

4. կանգնեցրի. ասում է՝ (նաև)՝ քաղաք Արծունիունի(ին)²5. արձանագրություն կանգնեցրի. ասում է՝¹այստեղ³6. (և՛) կոթող, այստեղ³ (և՛) արձանագրություն

կանգնեցրի

7—12 (տողերը պարունակում են ուրարտական արձանագրությունների վերջում տրվող նզովքը, տվյալ դեպքում՝ կոթողը փաստողի հասցեին)։

Ինչպես տեսնում ենք, արձանագրությունները հիշատակում են ուրարտական թագավոր Մենուային, Իշպուինի որդուն, ուստի և հայտնի օրինակը (CICH, 29), առանց երկընտրանքի, բոլոր հրատարակություններում մտել է Մենուայի թողած արձանագրությունների շարքը։

Այս հարցին ոչնչով չէր կարող օգնել CICH 29 արձանագրության առջևի կողմում պահպանված երեք տողը. սրա լավագույն ընթերցումը մենք գտնում ենք F. König-ի գծագրում⁴, որը և մեր տառադարձումով նշում ենք առերևույթ (նկ. 3)։

1 1 Iš-pu ú-t-ni!-[hi-ni]...⁵2 nu ni⁶ D Hal-di-ni ar-a-ni3 ni e⁶... D⁷ U-a-ni

Ահա այս երեք թերթմբոնի տողերը խիստ կարևոր արժեք են ստանում, երբ այն համեմատում ենք մեր ձեռքի տակ եղած ու այս հոդվածի սկզբում նշած № 7281—7283 սեպագրիների բովանդակության հետ։ Այս համեմատությունը պահանջվեց վերոհիշյալ արձանագրությունների մեր ուսումնասիրության հենց սկզբից։

¹ Վկայում է քայի կրկնությունը, մեր կարծիքով, հատուկ շեշտի երանգ է տալիս բովանդակությանը. Մենուան, ինչպես թելադրում է արձանագրության շուրջն ու ողին, ցանկացել է, ըստ երևույթին, առանձին-առանձին բնորոշել նոյն Արծունիունի քաղաքում սահմանած երկու կոթող արձանագրությունները։

² Գ. Մեյերի շփոթությունն ավելի հակված է հասարակ գոյական անուն ըմբռնելու. (YKH, № 99, ծնթ. 9)։

³ Ուրարտական ni=այս բառի ներգոյական հոլովածն է (Inaa=սրանում), այսինքն՝ այստեղ, նույն տեղում։

⁴ F. König, I, 74. աղյուսակ 49, առջևի կողմը։

⁵ Այս տողը թեև նշված է այլ հրատարակություններում, բայց որևէ բառի կամ նշանի որոշակի ընթերցում ոչ մի տեղ չկա (CICH 29, YKH, 99)։

⁶ Դժբախտաբար այս տեքստի F. König-ի տված գիտական տառադարձումը մեզ հայտնի չէ, ուստի չգիտենք, թե ինչպես է կոպակցում F. König-ը այս նշանը նախորդի հետ. ըստ CICH-ի և Գ. Մեյերի շփոթության՝ I դեպքում nu-ni, որից հետո Գ. Մեյերի շփոթությունն, երևի թյուրիմացաբար, նշել է ֆեապած ֆեապաբի տեղ. II դեպքում . . . ni-e...

⁷ CICH-ը և YKH-ն գերադասում են —|— նշանը ըմբռնել իր an նշանակությամբ, ծանոթագրելով, որ հնարավոր է նաև աստված որոշիչի ընթերցումը (CICH, 29, ծնթ. 2, YKH 99, ծնթ. 1)։ Իսկ թե դրանցից ո՞րն է ընդունել F. König-ը, մեզ հայտնի չէ։ Մենք ճիշտ ենք համարում վերջին՝ աստված ընթերցումը։

Պարզվեց, որ հիշյալ երեք տողերը բառացի կրկնությունն են նոր արձանագրության 12—14 (21—23) և 35—37 (44—46) տողերի, որոնց շնորհիվ փոխադարձաբար վերականգնում ենք համապատասխան տողերի բովանդակությունը:

Նոր արձանագրության մեր ընթերցումը և ClCh, 29 արձանագրության առջևի կողմում պահպանված տեքստի վերականգնումը հետևյալ պատկերն ունի.

1. [1. ^D Hal-di
2. ^D Hal-di
3. ¹ Me-nu-a-se-¹ š-pu-i-ni-ḫi-ni-se a-li
4. ^D Hal-di-ni li KĀ(?)
- 5—9]¹

№ 7281 սևապակի (1/10—9/18 տող), նկար 4.

- 10¹e]
- 11 K[Ā(?)²e-'[a]
12. [e-'a]³ te-ru-[ú-bi]⁴
- 13¹ú¹-kan⁵ u(?)⁶
- 14?
15. [^D Hal-[d]i-[i ni] be-[di-i-ni]⁸
16. [^D Hal-di-[n]a-[ni KĀ be-di-ni]
17. [¹ Me-nu-a-¹ š-pu-i-ni-¹ ḫi-ni]⁹
18. [ma]-a-nu-¹li¹

№ 7282 սևապակի (10/19—25/34 տողեր), նկար 5.

19. ¹ š-pu-u-[i-ni-i-e]¹⁰
20. ¹⁰ Sar₅-d[u-ú-ri-e-ḫi ni e]¹¹
21. ¹ Me-nu-a ¹ š-p[u-ú-i-ni-e-ḫi-ni-e]¹¹

¹ Մեկից իննը տողերը վերականգնում ենք նույն արձանագրության 24—32 (կրկնակ տեքստ) տողերի հիման վրա:

² Եթե ճիշտ է այս ընթերցումը, ապա նրան պետք է նախորդեր, հավանաբար ^D Hal di-ni-li=նալդյան(ը) բառը (հմմտ. 4/27 տողերի հետ):

³ Վերականգնում ենք 33-րդ տողի հիման վրա:

⁴ Teru- բայը իշպուինիի և Մենուայի միացյալ տեքստերում սովորաբար կիրառված է երկու անթույլ կամ¹ DUB-te teruni (¹eirtu)=արձանագրություն կանգնեցրեց (կանգնեցրին), կամ² ardiše teruni) —կարգ (օրենք սահմանեց): Տվյալ դեպքում, ամենայն հավանականությամբ, Մենուան կոթող է կանգնեցրել ռալդյան գոնների առջև:

⁵ Երևի պետք է վերականգնել ուրարտական ¹ku¹ka¹n(1)=նույն բառը:

⁶ Եթե այս <[u] նշանը մի այլ սեպարիթի մասը չէ:


⁷ Այս տողի ընթերցումը խիստ անորոշ է:

⁸ Այս և հաջորդ տողը վերականգնում ենք պահպանված սեպարիթների հիման վրա և այլ արձանագրությունների նմանությամբ (ՄԿԽ, № 18 10—11, 26—27, 42—43, 97, 172, և այլն):


⁹ Վերափորությունը վերականգնում ենք ՄԿԽ, 27-րդ տողի հիման վրա:

¹⁰ Հաջորդ 21-րդ տողի ¹Menua սրական հոլովածն է թելադրում է մեզ այսպես վերականգնել տվյալ դեպքում:

¹¹ Վերականգնում ենք այլ տեքստերի նմանությամբ (ՄԿԽ, № 94, 95, և այլուր):



24. 3.



24. 4.

22. [e¹¹-a ŠALMU²-ni^D [Hal-di-ni ar-a-ni]³
 23. [m]⁴a-a-nu-li-ni [e¹-[a^D Ú-a-ni]⁵
 II. 24.⁶ ^D Hal-di-[.]⁷
 25. ^D Hal- d[.]
 26. ¹ Me-nu-a-še ¹ [lš-pu-i-ni-ħi-ni-še a-li]⁸
 27. ^{1D} [Hal-¹di¹-ni-l[.]
 28—32⁹
 33. [e] ¹⁰
 34. [KÀ e-¹a]¹⁰

№ 7283 սևապակի (27/35—37/46 տողեր), նկար 6.

35. [e-¹a] [te ru-ú-bi]¹⁰
 36. [u-kan u?-] . . . ¹¹
 37. ¹²
 38. ^{1D} Hal-d[ti-i-ni be-di-i-ni]¹³
 39. ^{1D} Hal-di-n[a-ni KÀ be-di-ni]
 40. ^{1D} [Na¹-a-¹la¹-[i-ni]
 41. [m]¹⁴a-a-nu-[li]
 42. ¹ lš-pu-ú;-[i-ni-i-e]¹⁵
 43. ^{1D} Sar₅-du-[u-ri-e-ħi-ni-e]
 44. ¹ Me-nu-a ¹ lš-pu-ú[-i-ni e-ħi-ni-e]
 45. [e-¹a ŠALMU-ni^D [Hal-di-ni- ar-a-ni]
 46. [m]¹a-a-nu-li-ni e-[¹a^D a-ni]

¹ Այս ընթերցումը (Σ I γ) հիմնավորվում է ավելի 45-րդ տողով:

² Տողասկզբի e'a (=թե) ընթերցումը հիմք է տալիս մեզ —I-(nu) սեպագրումը ըմբռնել իր զաղափարադրային նշանակությամբ՝ ŠALMU=արձան (статуя, տե՛ս Липин-Аккадский язык, I, 1957, սեպագրումը № 51):

³ Վերականգնում ենք ClCh, 29 արձանագրության առջևի մասի 2-րդ տողի հիման վրա:

⁴ Թեև սեպագրի սկիզբը նորից անորոշ է, սակայն այստեղ մեր ընթերցումը անկասկած է:

⁵ Վերականգնում ենք ClCh, 28 արձանագրության առջևի կողմի 3-րդ տողի հիման վրա:

⁶ Անկասկած, այս 24-րդ տողից է սկսվում հիմնական բովանդակության կրկնությունը (2-րդ մաս):

⁷ Ըստ երևույթին, պետք է վերականգնել՝ ^D Hal-di-ni-ni uš ma-ši-ni կամ այլ, նման տիպի շարադասությամբ:

⁸ Վերականգնում ենք այլ տեքստերի նմանությամբ:

⁹ Այս տողերում սեպահետքերը խիստ անորոշ են, ուստի ընթերցումը անհնար:

¹⁰ Վերականգնում ենք նախորդ 10—12 (հիմնական տեքստ) տողերի հիման վրա:

¹¹ Վերականգնում ենք նախորդ 13-րդ տողի հիման վրա:

¹² Այս տողը չի ընթերցվում: Սեպահետքերը անորոշ են:

¹³ Այստեղից բոլորովին որոշակի նույնությամբ կրկնվում է նախորդ 15—23 տողերի բովանդակությունը:


¹⁴ Այս նշանը թեև չորս անգամ է հանդիպում մեր արձանագրության մեջ, սակայն բոլոր դեպքերում էլ այն ամբողջական չէ. այնուամենայնիվ մեր ընթերցումը անկասկած է. տե՛ս նաև 13-րդ ծանոթագրումը:

¹⁵ Այս և հաջորդ տողերի առթիվ տե՛ս արձանագրության 10—23 տողերի ծանոթագրություններ:

Նշենք նաև CICH 29 արձանագրության առջևի երեք տողը, մեր ընթերցումով.

1. [Me-nu-a]¹ [š-'pu-ú-i-ni-bi-ni-e]²

2. [e-'a]³ ŠALMU⁴-ni 𐎶𐎠𐎢𐎠𐎢𐎠 ar-a-ni



Նկ. 5.

¹ Վերականգնում ենք մեր արձանագրության 21-րդ և 44-րդ տողերի հիման վրա, որը արդարանում է համապատասխան տեղով ու պահպանված սեպահետքերով:


² Տեղը հնարավորություն է տալիս Է. Kōnig-ի ընթերցմանը ավելացնել վերջում պահանջվող e-ն՝ տրականի հոլոխիչը:

³ Վերականգնում ենք մեր արձանագրության 22-րդ և 45-րդ տողերի հիման վրա. CICH-ը այս տեղի համար իրավամբ ենթադրում է 1-3 նշան:

⁴ Նախորդ e'a բառի առկայությունը հիմք է տալիս ու-ն ըմբռնել որպես գողափաթափիր. վերջինս որպես այգիսին ուրարտական արձանագրություններում հանդիպում է առաջին անգամ:

3. [ma-a-nu-li]¹-ni e-[a]² U-a-ni³

Մենք վերևում ցույց տվեցինք, որ № 7284 սեապակին կրկնօրինակն է CICH 29 արձանագրության, իսկ սրա առջևի կողմում պատահամբ պահպանված երեք տողերը նույնանում են №№ 7281—7283 սեապակիների արձանագրության 21—23 և 44—46 տողերի հետ՝ տող առ տող, բառ առ բառ, ուրեմն առանց երկրնտրանքի կարելի է ասել, որ № 7284 սեապակին նոր արձանագրության վերջաբանն է, իսկ CICH 29 կոթողի մեզ առաջսօր անհայտ վերին մասը պարունակել է 46 տողից ոչ պակաս մի տեքստ⁴, որի կրկնությունն է



Նկ. 6.

¹ Վերականգնում ենք մեր արձանագրության 23-րդ և 46-րդ տողերի հիման վրա. CICH-ը նշում է 3—4 նշանի տեղ:

² Վերականգնում ենք նույն 23 և 46 տողերի հիման վրա, ինչպես և ելնելով տեղից ու նկատվող սեպահետքից:

³ CICH-ում՝ an u a ni, իսկ YKH կարդում է՝ an(?)—u-a-ni՝ ելնելով տեքստի էությունից, ճիշտ ենք համարում մեր ընթերցումը:

⁴ Պետք է ենթադրել, որ կրկնօրինակ կոթողներից յուրաքանչյուրը ունի երկու մետր բարձրություն. CICH 29 արձանագրության բեռնի բարձրությունը 83 սմ է, որի մի երեսին փորագրված 12 տողը կազմում է՝ զրեթի բեկորի կեսը. իսկ մյուս էջի 3 տողը մեր արձանագրության հիմնական բովանդակության վերջին տողերն են. այսինքն, բայց մեր ենթադրության, 21—23 տողերը, ուրեմն, նախորդ 20 տողը և 2-րդ մասի 1—23 (24—46) տողերը պետք է գրավեն մոտավորապես 80 սմ բարձրություն. հետևաբար ամբողջ բարձր կունենար 160—200 սմ-ից ոչ ավելի բարձրություն:

հանդիսանում մեր նոր արձանագրությունը: Այդ տեքստը իր հերթին, մեր կարծիքով, ներկայացնում է նույն բովանդակության կրկնությունը, առաջին մասը 1—23 տող, երկրորդ մասը՝ 24—46 տող, որից, սակայն, ինչպես տեսանք, մեզ հասել է, շատ վատ վիճակում, ընդամենը 37 տող: Անուամենայնիվ արձանագրության բովանդակությունը թարգմանաբար և մոտավոր ճշտությամբ կարելի է վերարտադրել հետևյալ ձևով. 1/11. ըստ երևույթին՝ (1/24—2/25)¹ խալդյան² մեծություն (հզորություն, հրամանով կամ փառքով), (3/26) Մենուան իշպուհյան ասում է՝ (4/27) խալդյան դուներ կառուցեցի. (5/28—9/32)³ (10/33—13/36) . . . կոթող կանգնեցրի. (15/38—16/39) խալդու կողմից, խալդյան դռների կողմից (17/40—18/41) Նալախի(ն)⁴ (19/42—21/44) Իշպուհին Սարգուրյան (և) Սենուային Իշպուհյան (22/45—23/46) թե արձանը⁵ խալդյան⁶ ողորմություն⁷ կատարել⁸, քե⁹ Ուայի¹⁰ (արձանը):

Սրան հաջորդել են վերևում նշված № 7284 սեպագիր տողերը¹¹, որոնք ավարտվում են անեծքով՝ կոթողը փչացնողի հասցեին:

Ինչպես նախապես ասել ենք, արձանագրության վերջաբանը (անեծքը) հիշատակում է միայն Մենուայի անունը. միայն Մենուային է նշում նաև

¹ Համարիչում նշված թվանշանները ցույց են տալիս արձանագրության վերականգնած մեր օրինակում առաջին մասի տողերը, իսկ հայտարարը՝ երկրորդ մասի տողերը:

² Շեղագրով նշված բառը կամ նրա մի մասը մեզ հասած սեպագիր մեջ պահպանված է:

³ Այս տողերը ֆեասված են. վերականգնելու հնարավորություն չկա՝ Երեմի, բացի «Նալդյան դուներ» կոչվող սրբավայրից. կատարվել են և այլ նման ձեռնարկություններ, որոնց առջևում կոթողներ են կանգնեցվել:

⁴ 17/40—18/41 տողերի իմաստը պարզ չէ. թերևս Նալախի աստվածը (զուցե և այլ մերձակից աստվածներ) հանձնարարել է Իշպուհին և Մենուային կատարել խալդի և Ուա աստվածների արձանները, ինչպես, կարելի է ենթադրել 17/40-րդ տողում հանդիպող D Nu-a-la-a-[i-ni] աստվածանունից և հաջորդ տողերի բովանդակությունից:

⁵ Այս գաղափարագիրը առաջին անգամ է հանդիպում ուրարտական մեզ հասած դրավոր նյութերում: Հնագիտական նյութերից հայտնի են ուրարտական աստվածների ու կուռքերի արձանիկներ. դրանց պատկերը տեսնում ենք նաև բրոնզե իրերի քանդակներում, ինչպես և որմնակարներում, բայց սեպագիր արձանագրությունները նման տեղեկություններ հաղորդելու համար խստագույնս ժխտ են, ուստի մեր արձանագրությունը առանձին կարևորություն է ստանում այդ փաստարկումով:

⁶ Վերականգնել ենք ըստ ClCh, 20 արձանագրության առջևի կողմի 2-րդ տողի:

⁷ Վերականգնել ենք նույն հիման վրա. այսպես է թարգմանվում ar-a-ni բառը, որը զուգորդվում է arni բառի հետ (YKH, էջ 359 բառարանը):

⁸ Manulini-ն անցված ձևն է manu էական բայի. վերջին -ni-ն առաջին անգամ է հանդիպում՝ միացված manuli հաճախ կիրառվող բայաձևին. այս դեպքում, հավանաբար (11ni-ն նույն դերն է կատարում, ինչ մեր արձանագրության անեծքի ֆորմուլայում (տող 7-րդ) a-lu-uš-ni (=ով—այն) բառի մեջ և, ուրեմն, բառացի կնշանակե՝ «իրացնեն—այն (կտարեն—այն)»:

⁹ Այստեղ նաև իմաստով:

¹⁰ Ուա աստվածը ինչ-որ քաղաքում URU Niši [. . .] ni ունեցել է իր սրբավայրը, որին զոհաբերվել է երկու ոչխար (YKH, 27 տող 20):

Հավանաբար նման մի սրբավայրի առթիվ էլ հիշատակվում է մեր արձանագրության մեջ Ուա աստվածը, որը, կարծում ենք, (ինչպես և Մհերյան դուռն արձանագրության մեջ, հատկապես առաջնակարգ խմբերում նշված բոլոր աստվածները), անշուշտ եղել է ուրարտական պետություն մեջ մտնող հիմնական ցեղախմբերից որևէ մեկի աստվածը:

¹¹ Տե՛ս մեր այս հոդվածի 36—39 էջը:

են վեց աստվածանուն, որոնցից յուրաքանչյուրին զոհաբերվում է 2 եզ, 4 ոչխար¹:

Այդ աստվածներն են՝ Խուտուինին, Տուրանին, Ուան, Նալաինին, Շերիթուն և Արսիմեւան²: Այս աստվածների էության մասին մեզ շատ քիչ բան է հայտնի: Առաջին աստծու վերաբերյալ կան հետևյալ դիտողությունները. Խութուini-ն համեմատվել է ուրարտական hututuhի բառի հետ³, որի նշանակությունը պարզ չէ:

Մի այլ առիթով Գ. Մելիքիշվիլին հնարավոր է համարում Խութուini աստվածանունը նույնացնել qurase (=մայր հող, երկիր) բառի հետ, հիմք ունենալով այդ երկուսի գրաված 4-րդ տեղերը Խալդի, Թելշեբա և Շիվինի աստվածներից հետո⁴:

Այս դիտողությունները թեև որոշակի չեն, իսկ վերջին համեմատությունը նույնիսկ մեխանիկական բնույթի է, բայց նկատի ունենալով նույն ՄԿԽ, № 99 արձանագրության կրկնօրինակը կազմող մեր նոր անքստի ընձեռած նյութերը, թվում է թե՛ կարելի է վստահ ասել, որ դրանք ըստ էության, մոտ են ճշմարտությանը. բոլոր դեպքերում Խութուini-ն ավելի կապված է երկիր հասկացության հետ. hututuhi-ն մի երկրային բարիք է, որը պարզեւում է ուրարտ թագավորին Խալդի աստվածը՝ հոր զահն ու թագավորությունը նրան հանձնելուց հետո⁵. շատ հնարավոր է, որ այն նշանակի հող, երկիր, ինչպես ենթադրում է Գ. Մելիքիշվիլին, բայց ոչ այն իմաստով, որ Խութուini-ն նույնանա qurase բառի հետ:

Մեր կարծիքով ուրարտական արձանագրությունների անեծքի ֆորմուլայում առաջին անգամ հանդիպող qurase DINGIR⁶ և արտահայտությունը սերտորեն կապված է նույն արձանագրության հիմնական բովանդակության մեջ նշված ԽN ala(ini) և ԽUa(ni) աստվածանունների հետ⁸. ենթադրում ենք, որ փորագրողը անեծքում խուսափել է առանձին-առանձին նշելու նաև երկրային վեց աստվածներին և ընդհանուր ձևով է արտահայտել այդ իմաստը, որով նա մի կողմից շահել է տեղ ու ժամանակ, մյուս կողմից, որ գլխավորն է, ավելի է շեշտել երկնային աստվածների առաջնությունն ու կարևորությունը:

Վերահիշյալ վեց աստվածներից, թվում է թե երկրի հետ է կապվում նաև Շերիթու աստվածը, որը, ըստ երևույթին, առնչվում է աստուրա-բաբելական Sabitu (=Siduri) աստվածանվան հետ. վերջինը Բաբելոնյան աշտաբակաշինության էպոսում Գիլգամեշին խորհուրդ է տալիս բավարարվել երկրային բարիքներով և չհետապնդել անմահության, իսկ ինքը պատկերված է

¹ Բադառությամբ երկրորդ տեղը զբաղող Տուրանի աստծու, որին զոհաբերվում է մեկ եզ, 5 ոչխար. հավանաբար, սա փորագրողի սխալն է:

² ՄԿԽ, 27, 5 թ տողեր:

³ Գր. Ղափանցյան. Ուրարտուի պատմություն, 1940, էջ 46, ուր hututuhի-ն (խութ- և tuhի բառակազմությամբ) թարգմանված է «իշխանություն» իմաստով: Նույնը տե՛ս ՄԿԽ, էջ 430 (բառարանը), միայն թե Գ. Մելիքիշվիլին, գուցե իրավամբ, չի թարգմանել այդ բառը:

⁴ Навру—Урагу. 1954, էջ 368, ծանոթ. 1: Հեղինակը նկատի ունի ՄԿԽ, № 27, 4-5 և № 49 ետևի էջի 8-9 տողերը:

⁵ ՄԿԽ, 127, V 16, 78. 156 AII+A1 28. 276 առջևի կողմը, 32:

⁶ Բնագրում գուցե եղել են 2-րդ խմբի մեջ մտնող և այլ աստվածներ, որոնք ղեժ-բախտարար չեն պահպանվել քննարկվող սևապակիներում:

որպես ծովի դարպասապահ, կամ, ինչպես ենթադրվում է, ծովեզրյա պանդոկապետուհի¹:

Պետք է ենթադրել, որ վերոհիշյալ երկու աստվածները ներկայացնում են երկրի վրա եղած երկու կարևորագույն երևույթ՝ մայր հողը և ծովը, ջուրը:

Եթե ճիշտ է արձանագրության 17/40 տողերի մեր ընթերցումը², ապա որոշ հիմք կա ասելու նաև, որ D^oNala(ini)-ն ուրարտական շինարվեստի կամ քանդակագործության աստվածն է եղել, այսինքն սա էլ կապված է երկրային կարևոր հանգամանքների հետ:

Ինչ վերաբերում D^oUa աստծուն մենք այն հակված ենք համեմատելու ուրարտական uanise բառի հետ. ի դեպ՝ մեր արձանագրության բովանդակությունը որոշ չափով մոտ է ծիսակատարական այն արձանագրություններին³, որոնց մեջ կոթող է ձեռնվում այս կամ այն աստծուն՝ հանուն թագավորի ու նրա որդիների ողջության (ulguse), ուրախության (pīšuse), երջանիկ օրերի UD^{ME} MEŠ KURUN^{ME}Š) և այլն. նման դարձվածքում հանդիպում է նաև uanise բառը, որի իմաստը պարզ չէ. մեզ թվում է, որ այն ամենայն հավանականությամբ արտահայտում է Ua(ni) աստծու էական հատկանիշը, որը շատ կարևոր ու դրական արժեք պետք է պարունակի, հավասարազոր՝ Զոլթյուն, մեծություն, երջանկություն, հզորություն իմաստներին⁴:

Ելնելով այս բոլորից ճիշտ պետք է համարել Ualdise D^oIM-še D^oUTU-še-qurašē DINGIR^{ME}Š-se դարձվածքի «Խալդին, Թելշերան, Շիվինին (և) երկրային⁵ աստվածները» թող ոչնչացնեն (կոթողը ֆնասողին)» թարգմանությունը, իսկ երկրային աստվածները, այդպիսով՝ կլինեն Մհերյան դուան արձանագրության 5—6 տողերում նշված վեց աստվածությունները:

Արձանագրության վերջում հիշատակված է քաղաք Արծունիունին (տարբերակը՝ Արծունի). որը հանդիպում է՝ նույն Մհերյան դուան արձանագրության⁶ և ֆրագմենտար մի այլ արձանագրության մեջ⁷:

Մեր արձանագրության կրկնօրինակը՝ ClCh 29-ը, ինչպես հայտնի է, հայտնաբերվել է Բերկիրում, Վանա լճից դեպի հյուսիս-արևելք, բայց ոչ իր նախնական տեղում: Հնարավոր է, որ այդ քաղաքը մոտիկ մի այլ տեղից բեր-

¹ Գր. Ղափանցյան, Об урартском божестве Шэбиту, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ ԳԱ, 1946, № 11—12, էջ 10—12, 14—16 և այլն:

Հեղինակը ընդգծելով այդ զուգահեռը, միաժամանակ հնարավոր է համարում մի այլ բացատրություն Շերիթու անվան համար (նույն տեղում, էջ 15—16): Այս երկրորդ զուգահեռը մեզ չի համոզում. եթե Շերիթուն իր էությունը կապվեր Յոթի (Sibiti) համառանգության աստծու հետ, ապա, կարծում ենք, պանթեոնում կգրավեր յոթներորդ տեղը, մինչդեռ Շերիթուն նշված է 5-րդ տեղում:

² Տե՛ս նոգվածի 27-րդ էջ, ծանոթ. 4-րդ:

³ Օրինակ՝ YKH. № 93₁, 91₁, 95₁, 171₄₋₈, 172₄₋₈:

⁴ Տե՛ս YKH. № 171₆, 172₅ արձանագրությունները:

⁵ Q1u1ašē բառում վերջին šē-ն պարզապես կրկնում է նախորդ և հաջորդ բառերի երկրանիշը:

⁶ YKH, 27, տողեր 15, 57:

⁷ YKH, 97: Այս և սրա հետ առնչվող № 96 արձանագրությունը իրենց կրոնածիսականաբանական բնույթով ու մանավանդ փորագրական արվեստով մոտ են մեր արձանագրությանը. հավանաբար դրանք էլ փորագրված են Մենուայի թագավորության առաջին տարիներին:

ված¹ և Բերկրիում որպես գերեզմանաքար օգտագործված լինի: Համենայն դեպս ուրարտական Արծունիունի քաղաքը² Բերկրիից շատ հեռու չպետք է փնտրել, և չնանկասկած եղել է Վանի մերձակայքում: Անշուշտ միևնույն տեղից պետք է լինի նրա երկվորյակը՝ մեր այս արձանագրությունը:

Այսպիսով, ինչպես տեսանք, նոր արձանագրությունը թեև հասել է մեզ խիստ վնասված վիճակում, բայց և այնպես հիմք է տալիս արժեքավոր դատողությունների, օգնում է մեզ ավելի ամրող ջանքերով Իշպուինիի և Մենուայի ժամանակաշրջանի ուրարտական մշակույթի մասին մեր ունեցած պատկերացումը, բազմապատկում ու ճշտում է փաստերը, նոր լույս է սփռում ուրարտագիտական մի շարք կարևոր հարցերի շուրջը:

¹ Ս. Բարխուդարյանի ենթադրությամբ այդ և ՄԿԽ 96, 97 քարերի նախնական վայրը պետք է եղած լինի Սղղա գյուղի մոտ, նորից Վանա լճից արևելք, բայց հարավային ծայրում:

Շատ ավելի հնարավոր է, որ այդ վայրը լինի Շուշանց գյուղը, քանի որ ՄԿԽ. 97-ը և 96-ի մի բեկորը համաձայն որոշ տեղեկությունների, Շուշանց գյուղից են բերված Սղղա:

² Ըստ Գ. Մելիքիշվիլու՝ «Ամենայն հավանականությամբ որևէ քաղաքի հատուկ անուն չէ, այլ ինչ-որ հասարակ գոյական անուն» (ՄԿԽ, 99, ծանոթություն 3):

Մեր կարծիքով, ճիշտ են այն հեաղոտողները, որոնք զա համարում են քաղաքանուն, հետևաբար և ցեղանուն, ու դրանից սերում են Արծունի հայկական տոհմանունը (տե՛ս Դր. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, 1940, էջ 48):

Ս. Բարխուդարյան, Урартское происхождение армянского нахарарского рода Арцруни—Исследования по истории культуры Востока, АН СССР, М.—Л, 1960 էջ 36: